

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 260.1-ին հոդվածով.

«Հոդված 260.1. Հիփոթեքային արձակուրդ

1. Հիփոթեքային արձակուրդ է համարվում հիփոթեքով ապահովված՝ վարկային (կրեդիտավորման) կամ փոխառության պայմանագրով վարկառուի (փոխառուի) ստանձնած պարտավորությունների կատարման արտոնյալ ժամանակահատվածը:
2. Հիփոթեքային արձակուրդ տրամադրվում է միայն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այն վարկառուներին (փոխառուներին), որոնց կողմից կնքված հիփոթեքի պայմանագրի առարկա գույքը հանդիսանում է (հանդիսանալու է) նրանց մշտական բնակության վայրը է և առկա չէ նրանց սեփականության իրավունքով պատկանող այլ բնակելի անշարժ գույք (բնակարան, բնակելի տուն):
3. Հիփոթեքային արձակուրդի տրամադրման պայմանները և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու դեպքերը սահմանվում են «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» օրենքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո: